**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՁԵՎԱՉԱՓ (*TUPOS*)**
**SPECIAL TOPIC: FORM (*TUPOS*)**

*Tupos* տերմինն ունի լայն կիրառություն՝

1. Մուլթն և Միլիգան, *Հունարեն Նոր Կտակարանի Բառարան*, էջ՝ 645 (Moulton and Milligan, *The Vocabulary of the Greek New Testament*)
   ա. նմուշ
   բ. ծրագիր
   գ. գրելաոճ կամ գրելաձև
   դ. որոշում կամ հրաման
   ե. դատավճիռ կամ վճիռ
   զ. մարդկային մարմնի նմուշը՝ մոդելը, որպես ընտիր զոհ նվիրված բժշկող աստծուն
   է. ԲԱՅ, որը գործածվում է օրենքի հրամանները ստիպելու իմաստով
2. Լու և Նիդա, *Հունարեն-անգլերեն բառարան* (Louw and Nida, *Greek-English Lexicon,* հատոր 2, էջ՝ 249)
   ա. սպի (տես՝ Հովh.20:25)
   բ. պատկեր (տես՝ Գործք 7:43)
   գ. մոդել՝ նմուշ (տես՝ Եբր.8:5)
   դ. օրինակ (տես՝ 1 Կորնթ.10:6; Փիլ.3:17)
   ե. նախատիպ (տես՝ Հռոմ.5:14)
   զ. տեսակ (տես՝ Գործք 23:25)
   է. բովանդակություն՝ նամակ (տես՝ Գործք 23:25)
3. Հարոլդ Ք. Մուլթն, *Վերլուծական Վերանայված Հունարեն Բառարան* (Harold K. Moulton, *The Analytical Greek Lexicon Revised,* էջ՝ 411)
   ա. ինքնագովում, տպավորություն, նշան (տես՝ Հովh.20:25)
   բ. սահմանափակում
   գ. պատկեր (տես՝ Գործք 7:43)
   դ. բանաձև, սխեմա (տես՝ Հռոմ.6:17)
   ե. տեսք, բովանդակություն (տես՝ Գործք 23:25)
   զ. ձև, կրկնօրինակ (տես՝ 1 Կորնթ.10:6)
   է. կանխատեսելի ձև, տեսակ (տես՝ Հռոմ.5:14, 1 Կորնթ.10:11)
   ը. օրինաչափություն (տես՝ Գործք 7:44, Եբր.8:5)
   թ. բարոյական չափանիշ (տես՝ Փիլ.3:17, 1 Թեսաղ.1:7, 2 Թեսաղ.3:9, 1 Տիմ.4:12, 1 Պետ.5:3)

Այս համատեքստում #1-ը կարծես թե լավագույն տարբերակն է: Ավետարանը առնչվում է թե՛ վարդապետության և թե՛ ապրելակերպի հետ: Քրիստոսի մեջ փրկության ձրի պարգևը նույնպես պահանջում է Քրիստոսանման կյանք: